ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ. «ՀԱՄԱՏԵՂ ՋԱՆՔԵՐՈՎ ԿԿԱՐՈՂԱՆԱՆՔ ԿԱՅՈՒՆԱՑՆԵԼ ԵՐԿՐԻ ՎԻՃԱԿԸ»

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄԵԿՆԵՑ ՄՈՍԿՎԱ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 29 փետրվարի 2000 թ.:

Այսօր, առավոտյան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Ռուս Ուղղափառ Եկեղեցու գահակալ, Մոսկվայի և Համայն Ռուսիոյ Պատրիարք Ալեքսի Երկրորդի եղբայրական հրավերով մեկնեց Մոսկվա:

Նորին Սրբությանը ուղեկցում էին Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի գլխավոր քարտուղար Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը, Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը, Հարավային Ռուսաստանի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Մովսես վրդ. Մովսիսյանը, Սանկտ-Պետերբուրգի հայոց հոգևոր հովիվ Տ. Եզրաս աբդ. Ներսիսյանը, Տ. Արշակ աբդ. Խաչատրյանը՝ իբրև գավազանակիր, և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Ռաֆայել Պապայանը: Մոսկվայում Վեհափառ Հայրապետի շքախմբին կմիանա նաև Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Տիրան արքեպս. Կյուրեղյանը:

Վեհափառ Հայրապետի անդրանիկ այցը Մոսկվա նպատակ ունի զորացնել երկու Եկեղեցիների դարավոր կապերն ու ջերմ հարաբերությունները:

Այցելության ընթացքում Նորին Սրբությունը հանդիպումներ կունենա Ռուսաստանի հայ համայնքի ներկայացուցիչների, թեմական խորհրդի և հավատացյալների հետ, կայցելի Մոսկվայում կառուցվելիք հայկական եկեղեցու տարածք:

Օդանավակայանում, ի պատասխան լրագրողների հարցերի, Նորին Սրբությունն անդրադարձավ և Հայրապետական իր մաղթանքը հղեց Հայաստանի նորակազմ կառավարությանը:

«Դրական ենք համարում, որ տարբեր կուսակցություններ պաշտոններ են ստանձնել այս կառավարության մեջ: Հավատում ենք և հույս ունենք, որ համատեղ ջանքերով մեր ժողովուրդը պիտի կարողանա բարօր կյանք կերտել, կայունացնել երկրի վիճակը և հանրապետությունը դուրս բերել տնտեսական, սոցիալական ծանր վիճակից»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ